

ազգիս»²⁵ : Իսկ Ղուկաս Գառնեցի 1631ին թուեցով Մովսիսի զործերը՝ կը գրէր. «Բազմացոյց զմիայնակեացս եւ զկրօնաւորս ի սուրբ մենաստանս եւ ի վանորայս, այլ եւ զզրոց աշակերտեալ մանկունս, որ ցանկան եւ փափաքեն անխարզախ կաթինն : Եւ զի այսպէս ի հոժ եւ ի յոլով տեղիս կաճառեաց եւ խտացոյց զնոսա . եւ ունի ընդ ձեռամբ յինքեան միաբանեալ եղբարս աւելի քան զուրբ հարիւր . եւ զպէտս ամենեցուն լիով հոգայ եւ այսպէս խնամեալ պահէ զսոսա կամօք բարերարին Աստուծոյ» :

Գրիգոր Գարանաղցի (էջ 300) ի տես Մովսէս կաթողիկոսի այս բարեկարգական եւ բարեզործական հիմնարկութիւններու կը բացազանչէ . «որ եւ այսպիսի կարգաց սահմանազրուեթիւնս ի Ժամանակս Տրդատայ եւ Լուսաւորչին հազիւ թէ եղեւ սակաւ մի» . Իսկ զպրոցական հաստատութիւնները յիշելով կը գրէ , թէ իրմէ յառաջ «զպրատուն բնաւ երբեք ոչ եղեն յազգս մեր» եւ կը համեմատէ կաթողիկոսը Զօրաբարէլի եւ Եզրի հետ , որոնք յետ Իսրայելացւոց եօթանասնամեայ զերութեան վերադարձան Պաղեստին եւ վերահաստատեցին հին կարգերն ու բարքերը :

Երկրին մտաւոր կեանքի այս հսկայ բարեփոխութիւնը , որ տեղի ունեցաւ արեւելեան Հայաստանի մէջ յընթացս 20 տարիներու , արդարեւ կը հիացնէ զննողը : Կորդ եւ

²⁵ Արարատ, 1911, էջ 852: